ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «18» հունիսի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 20-Ա/Ք

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի նախագահի 2019 թվականի հունիսի 17-ի N 19-Ա/Ք հրամանով հաստատված «Գիտական միջոցառման կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգի» 3-րդ կետը և «Երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգի» 3-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ստեղծել մրցութային հանձնաժողով գիտական միջոցառման և երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթների հայտերը գնահատելու նպատակով:

2. Հաստատել՝

1) հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԳԿ նախագահի
«18» հունիսի 2019 թ.
N 20-Ա/Ք հրամանի

(Հավելվածը փոփոխվել է 2021 թ. հունվարի 20-ի N 04-Ա/Ք հրամանով)

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ասատրյան Ռուզան	ՀՀ գիտության կոմիտեի ԳԳԿ վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
Աբաջյան Աննա	ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ
Աղբալյան Սուրեն	ՀԱՊՀ մետալուրգիայի և նյութագիտության ամբիոնի պրոֆեսոր
Այվազյան Նաիրա	ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն
Վերմիշյան Հարություն	ԵՊՀ սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի վարիչ
Զաքարյան Հայկ	ԵՊՀ գիտաշխատող
Սարգսյան Գայանե	Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի տնօրեն
Անանյան Ռուզաննա	ՀՀ գիտության կոմիտեի ԳԳԿՎ գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժնի առաջատար մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Հավելված N 2
ՀՀ ԳԿ նախագահի
«18» հունիսի 2019 թ.
N 20-Ա/Ք հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպություններում կամ բուհերում (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական միջոցառման և երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթների հայտերի (այսուհետ՝ Հայտ) գնահատումն իրականացնում է մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակներն են՝

1) Հայտերի գնահատումը,
2) Հայտերի վարկանիշային ցանկի կազմումը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը:

7. Հանձնաժողովի անդամները գնահատում են Հայտը՝ լրացնելով համապատասխան գնահատման թերթիկը (Հանձնաժողովի աշխատակարգի հավելված N 1 և հավելված N 2): Գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը 5 միավոր՝ 1 միավորի ճշտությամբ:

8. Հանձնաժողովը կազմում է Հայտերի վարկանիշային ցանկ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հայտի գնահատականների միջին թվաբանականը:

9. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների կողմից:

10. Հանձնաժողովի անդամների կողմից այլ անձանց սույն աշխատակարգով չնախատեսված ձևով պարզաբանումներ և (կամ) մրցույթին վերաբերող այլ տեղեկություններ տրամադրելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

11. IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է Հանձնաժողովի նիստերը.
2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը.
3) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

13. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստին.
2) լրացնում է գնահատման թերթիկը.
3) ստորագրում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.
4) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

14. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) Հանձնաժողովի անդամ չէ.
2) պատասխանատու է Հանձնաժողովին տրամադրվելիք նյութերի նախապատրաստման համար.
3) ապահովում է Հայտերի գնահատման թերթիկների պատրաստումը.
4) Հայտերը տրամադրում է Հանձնաժողովի անդամներին.
5) կազմում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.
6) ապահովում է Հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի պահպանումը և սահմանված կարգով արխիվացման նպատակով այդ փաստաթղթերի հանձնումը Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

Հավելված N 1
մրցութային հանձնաժողովի աշխատակարգի

ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Գիտական միջոցառման անվանումը _____

Հ/h	Չափորոշիչներ	Գնահատական	
		առավելագույն	վերջնական
1.	Գիտական միջոցառման նյութերը հրապարակվելու են		
	WOS և Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված պարբերականում	5	
	այլ գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված պարբերականում	3	
	գիտաժողովի ժողովածուում	2	
2.	Մասնակիցները		
	Հայաստանի Հանրապետությունից և 3-5 օտարերկրյա պետություններից են	5	
	Հայաստանի Հանրապետությունից և մինչև 3 օտարերկրյա պետություններից են	3	
	միայն Հայաստանի Հանրապետությունից են	2	
3.	Համապատասխան գիտական դպրոցը Հայաստանի Հանրապետությունում		
	Հայաստանի Հանրապետությունում գիտական ուղղության ներկայացուցիչները միջազգային առաջատար մասնագետների շարքերում են	5	
	Հայաստանի Հանրապետությունում գիտական ուղղության ներկայացուցիչներն ունեն միջազգային առաջատար մասնագետների շարքերում ընդգրկվելու հավանականություն	3	
	Գիտական ուղղությունը Հայաստանի Հանրապետությունում նոր է ձևավորվում կամ ունի հանրապետական նշանակություն	2	
4.	Միջազգային համագործակցությանը նպաստելու աստիճանը		
	Զարգացնում է գոյություն ունեցող միջազգային համագործակցությունը	5	
	Նպաստում է միջազգային համագործակցություն ստեղծելուն	3	
	Նախատեսվում է միայն ներպետական (կամ տարածաշրջանային) համագործակցություն	2	
5	Երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնակիցների թիվը		
	Ընդհանուրի 20%-ից ավելի է	5	
	Ընդհանուրի 10% - 20%-ն է	3	
	Ընդհանուրի 10%-ից պակաս է	2	
	Ընդհանուր գնահատականը	25	

Գնահատող՝ _____ _____
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

Գնահատման ամսաթիվ

Հավելված N 2
մրցութային հանձնաժողովի աշխատակարգի

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Երիտասարդ գիտնականների դպրոցի անվանումը _____

Հ/h	Չափորոշիչներ	Գնահատական	
		առավելագույն	վերջնական
1.	Դասախոսները		
Հայաստանի Հանրապետությունից և 3-5 օտարերկրյա պետություններից են		5	
Հայաստանի Հանրապետությունից և մինչև 3 օտարերկրյա պետություններից են		3	
միայն Հայաստանի Հանրապետությունից են		2	
2.	Ունկնդիրների կազմը		
Հայաստանի Հանրապետությունից և 3-5 օտարերկրյա պետություններից են		5	
Հայաստանի Հանրապետությունից և մինչև 3 օտարերկրյա պետություններից են		3	
միայն Հայաստանի Հանրապետությունից են		2	
3.	Համապատասխան գիտական դպրոցը Հայաստանի Հանրապետությունում		
Հայաստանի Հանրապետությունում գիտական ուղղության ներկայացուցիչները միջազգային առաջատար մասնագետների շարքերում են		5	
Հայաստանի Հանրապետությունում գիտական ուղղության ներկայացուցիչներն ունեն միջազգային առաջատար մասնագետների շարքերում ընդգրկվելու հավանականություն		3	
Գիտական ուղղությունը Հայաստանի Հանրապետությունում նոր է ձևավորվում կամ ունի հանրապետական նշանակություն		2	
4.	Միջազգային համագործակցությանը նպաստելու աստիճանը		
Զարգացնում է գոյություն ունեցող միջազգային համագործակցությունը		5	
Նպաստում է միջազգային համագործակցություն ստեղծելուն		3	
Նախատեսվում է միայն ներպետական (կամ տարածաշրջանային) համագործակցություն		2	
Ընդհանուր գնահատականը		20	

Գնահատող՝ _____ _____
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

Գնահատման ամսաթիվ